ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

15 օգոստոսի 2025թ. **N 50-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 27-ի «Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը, ներկայացված տեղեկությունների ցանկի և հայտի ձևերը սահմանելու մասին» N 21-Ն որոշման՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրությունների ժամանակ հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու կարգը, տեղեկությունների ցանկի, հայտի և օգտահաշիվ ստանալու դիմումի ձևերը սահմանելու մասին»,

2) 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետով.

«4) սահմանել օգտահաշիվ ստանալու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվող դիմումի ձևը՝ համաձայն թիվ 4 հավելվածի:»,

3) թիվ 1 հավելվածի 3-րդ կետի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել,

4) թիվ 1 հավելվածի 3-րդ կետի չորրորդ պարբերությունից հանել «և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրված» բառերը,

5) թիվ 1 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ցանկը ձևավորվում է միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքի «Հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ տեղեկությունների մուտքագրման համակարգ»-ի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որից հետո Ցանկի վերջնական տարբերակը ներբեռնվում է Մայքրոսոֆթ Էքզել (Microsoft Excel) ձևաչափով և էլեկտրոնային եղանակով ուղարկվում է info@elections.am էլեկտրոնային հասցեին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գովազդային վահանակների բաշխման համար հիմք է ընդունում սույն կարգի 3-րդ կետով սահմանված վերջնաժամկետի ավարտին Համակարգի միջոցով ձևավորված Ցանկի վերջնական տարբերակը:»,

6) թիվ 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-րդ կետով.

«4.1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող Ցանկը ձևավորելու նպատակով արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում դիմում՝ Համակարգ մուտք գործելու տվյալներ օգտահաշիվ՝ օգտվողի անուն և ծածկագիր տրամադրելու պահանջով: Դիմումում նշված էլեկտրոնային հասցեով արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններին ուղարկվում է կազմակերպության օգտահաշիվը՝ հետևյալ գրանցումներն իրականացնելու համար՝

1) մուտքագրել տրամադրվող գովազդային վահանակների վերաբերյալ սույն կարգի 2-րդ կետում նշված տվյալները,

2) փոփոխություններ և լրացումներ կատարել տրամադրվող Ցանկում,

3) ինքնաշխատ կերպով ներբեռնել և տպել տրամադրվող Ցանկը:

Տվյալ ընտրությունների շրջանակներում տրամադրվող Ցանկի վերաբերյալ Համակարգում գրանցումներ կատարելու հնարավորություն տրվում է մինչև սույն կարգի 3-րդ կետով սահմանված վերջնաժամկետի ավարտը, որից հետո տրամադրված օգտահաշվով տվյալ ընտրությունների շրջանակներում գրանցումներ կատարելու հնարավորությունը կասեցվում է:»,

7) թիվ 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքներն) ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքի «Ընտրական ցուցակների առցանց մուտքագրման համակարգ»-ի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում էլեկտրոնային հայտ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրված գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար, որից հետո հայտը ներբեռնվում է Մայքրոսոֆթ Էքզել (Microsoft Excel) ձևաչափով և էլեկտրոնային եղանակով ուղարկվում է info@elections.am էլեկտրոնային հասցեին:

Հայտը ներկայացվում է միայն այն գովազդային վահանակների համար, որոնք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում առկա տեղեկություններին համապատասխան տրամադրվում են քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար:

Մի քանի ընտրություններ նույն օրը միաժամանակ անցկացվելու դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առանձնացնում է յուրաքանչյուր ընտրության շրջանակներում տրամադրվող Ցանկը:»,

8) թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

9) թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Որոշումը լրացնել նոր՝ թիվ 4 հավելվածով՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի օգոստոսի 15-ի N 50-Ն որոշման

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի մարտի 27-ի N 21-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԻՆԳ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

[Կազմակերպության անվանումը]
[Կազմակերպության գտնվելու վայրի հասցե (մարզ, համայնք, փողոց, շենք)]
[Էլ. փոստ:
[Հեռախոս: (374)

Ընտրության օրը

Կոդ (Տրվում է Համակարգի կողմից)	**Տեսակ**	**Մարզ**	**Համայնք, վահանակի գտնվելու վայր**	**Վահանակի նկարագրություն**	**Կողմ**	**Մակերես մ/ք**	**Վահանակի ամեն կողմի տրամադրման արժեքը 1 ամսվա համար, ՀՀ դրամով՝ ներառյալ հարկերը**	**Կողմի նկարագրություն**	**Այլ նշումներ** (կարող են նշվել այն համայնքները, որտեղ անցկացվող ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև ցանկանում են բաշխել արտաքին գովազդային վահանակները)

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի օգոստոսի 15-ի N 50-Ն որոշման

«Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի մարտի 27-ի N 21-Ն որոշման

Հ Ա Յ Տ

ՀԻՆԳ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՄԱԿԵՐԵՍՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱՆԳԱՌՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՔԱՐՈՁՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈՁՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

[ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ) ԱՆՎԱՆՈՒՄԸ]

Կոդ	Գովազդատու	Տեսակ	Մարզ	Համայնք, վահանակի գտնվելու վայր	Կողմ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի օգոստոսի 15-ի N 50-Ն որոշման

«Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2025 թվականի մարտի 27-ի N 21-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

[ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԸ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ]
[Կազմակերպության գտնվելու վայրի հասցե, հեռախոս, էլ. փոստի հասցե]

ԴԻՄՈՒՄ

[նշվում է ընտրության անվանումը և ամսաթիվը] ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված, կազմակերպության տնօրինության տակ գտնվող արտաքին գովազդային վահանակները տրամադրելու համար վահանակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելու նպատակով խնդրում ենք տրամադրել օգտվողի անուն (օգտահաշիվ) և ծածկագիր՝ «Հինգ քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված արտաքին գովազդային վահանակների վերաբերյալ տեղեկությունների մուտքագրման համակարգ» մուտք գործելու համար:

Կազմակերպության անգլերեն անվանումն է՝ «……»:

Կազմակերպության ներկայացուցիչն է՝

_____
(անուն, հայրանուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝

_____ _____
(անուն, հայրանուն, ազգանուն) (ստորագրություն)

[դիմում ներկայացնելու օր, ամիս, տարեթիվ]